

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում զրոյում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻԻՆ

„ՄՇԱԿ“ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մեր կը ստանանք սեփական
ՀԵՌԱՅԻՆՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսականը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցներին մի-
կրկնում, Թաւմաշիւի տանը):
Կայսերութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է գիտնէ հետեւեալ հաս-
ցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժողովրդական բժշկական
նութիւնը. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռազմագիտական տեղե-
կութիւններ. Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաս-
տանից. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ. ԼՈՒՐԵՐ.—
ՀԵՌԱՅԻՆՆԵՐ.— ԲՈՐՈՒՄ.— ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սալոմէ Նորատունկեան.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Անդրկովկասեան զանազան նահանգներէն ե-
կած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ ծա-
ղիկ կոչված հիւանդութիւնը աներեակայելի կեր-
պով տարածված է ամենափոքրիկ գիւղերում ան-
գամ, և ահագին զոհեր է տանում երեխաներից:
Ծաղիկը, որը, ինչպէս յայտնի է, շատ հեշտու-
թեամբ տարածվում է և լայն սահմաններ է ըն-
դունում, մեր տեղեկ և նախապաշարված ժողովր-
դի մէջ յարմար բուն է գտել, բազմաթիւ գիւղեր
արդէն ենթարկվել են դրա ազդեցութեանը. վա-
րակված գիւղերում շատ քիչ ընտանիք է կարո-
ղանում ազատ մնալ կորուստից. շատ ընտանիք-
ներ մի քանի օրում կորցնում են ոչ թէ երկու-
երեք, այլ հինգ, վեց երեխաներ: Գիւղական ժո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱԼՈՄԷ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Սալեթօն դեռ ևս բարկացած էր Սիմօնի վրա
և յանդիմանում էր նրան.
— Բու գլխի տուգնվելը դիտենայ. դու ես,
ինչպէս չէ. էս ա երկու շաբաթ է սիրտներս բե-
րաներս ա հասել, չալիչ դալով, հիմի սա ա-
սում ա, որ ինքն ա գլուխ բերել....
— Քիչ խօսէ է, քեանքիթառ:
— Հոգեմ քո զոյդ միայն գլուխը.... Մեծ աղի
սրկանները մոռացել ես ավր է.... Բերանս մի
բաց արա, թէ չէ....
— Է՛հ հերիք ա, Սալեթօն ջան, ավր մեր էս
ուրախութեան մէջ, կուրը հարկաւոր չի է: Դու
էլ, աղբաթ խէլի, ինչ ես կպել խեղճ կնկայ ես-
լիցի, ձեռ վեր առ է....
— Ախ, աղի հարս, բնագամ չես տեսնում, որ
ես ձեզ համար հոգի եմ տալի, Սալոմէին իմ եր-
կու աչքի լուսից աւելի եմ սիրում.... Ինչ անեմ,
որ էս զոյղ չունը հէնց ձեր տանը ինձ դիպչում
ա:
— Է՛հ, հերիք ա դու. Սիմօնը հանաք ա անում.
դու էլ հանաք հասկացիր դա.... Ախ Սալոմէ
ջան, անուրիք մեռնեմ.... Ախ, Աստուած, մեռ-

նեմ քու ողորմութիւնին, որ աչքս բաց էս բաղ-
դարութիւնը ինձ շանց տվար: Սալեթօն ջան,
գնանք էս իրիկուն Մարիամ Աստուածածնայ,
մեռնեմ նրա ողորմութիւնին.— պատկերի առաջ
մում վառենք: Ուստ եմ արել, որ բոլրիկ ոտով
գնամ նրա սուրբ պատկերի առաջը:
— Ախ, Սալոմէ ջան, իմ աղիք աղի բալայ, ա-
սեց Սալեթօն, արցունքը աչքերին՝ գրկելով ինձ,
— բեր մի էս քու երկու սիրուն աչքերից կուշտ
պաշտեմ: Աստուած բաղդաւոր անի ձեզ, հայր Աբ-
րահամ օրհնանքը ընդ ձեր վրա, որ ես էլ մի
կողմից տեսնեմ ու ուրախանամ: Ելէք, ծաղիկը
ուրախ սրտով, չոր աչքով.... Այ աղի հարս, աչ-
քըդ լուս, բարով խիզալին էլ նշաններ: Փառք
քեզ. էս օրին էլ հասանք....
— Սալեթօն, արի ինձ հետ էլ մի պուշտի արա
ու բարիչեք, ասեց Սիմօնը գրկելով Սալեթօն,
— դէ՛հ մի ուրիշ, թէ չէ կը տուգնուի.... Հանաք
էի անում, էլ փախնդ ինչու ես վեր գցել: Չը
գլխեմ, որ չունը շան միայն որ ուտէ, ոսկոռը
դէն չի գցի. Ես ավր քեզ ա բ է ժ ա տ կանիմ
սկիւն....
— Ը՛հ, զրոյդ տանի քու երեսը, դէ՛հ թող ինձ
է....
— Դէ՛հ Աստուած չնորհաւոր անի, վերջացրեց
Սիմօնը: Հիմի, հարսի, արի թաղարեքի հոգա ա-
նեմք: Թող սրանք էն տունը մի գնան, ես քեզ
հետ խօսելի բան չառ ունեմ:
* * *
Այսպէս ուրեմն, վաղը նշան պիտի բերին ինձ:

Թեան միջոցներ չեն ձեռք առնում, այլ և իրանց
բոլոր արարքներով աւելի են նպաստում հիւան-
դութեան սաստկանալուն: Հարեանքները երթե-
կում են այն տունը, որտեղ ծաղիկով հիւանդ
կայ. այնտեղից փոխ են առնում կերակուր, չոր
և ուրիշ իրեղէններ. ուղարկում են այնտեղ ի-
րանց երեխաներին, մի խօսքով ըստ սովորակա-
նին շարունակում են ամենամօտիկ յարաբերու-
թիւններ: Այդ դեռ բաւական չէ. այդպիսի դէպ-
քերում ծաղիկով վարակված տան յաճախորդները
կրկնապատկւում, եռապատկւում են, որովհետեւ
հարեաներից և ազգականներից իւրաքանչիւրը
այդպիսի դէպքերում իր սրբազան պարտքն է
համարում շուտ շուտ գնալու հիւանդի տիրոջ
տունը՝ նրան սփոփելու, օգնելու և միտքաբերու-
նապատկույն: Եւ գիւղացիները շատ ընկալուն
համարում, որ վերջում մի տան մէջ ծաղիկ երե-
ւալուց յետո՛յ՝ մի քանի օրում վարակվում է ամ-
բողջ գիւղը. քիչ չէ պատահում տեսնել, որ հար-
սանիքի հանդէսներ են կատարում այն տան մէջ,
որտեղ ծաղիկով հիւանդ երեխաներ կան, և միջ-
անդները, նոյն տան միւս մասում ուրախութիւն
և քէ քէ են անում հարեան հրաւիրված տղամար-
դիկ, կանայք և երեխաները:
Ահա ձեզ ծաղիկ և այդպիսի վարակիչ հիւան-
դութիւնների ուղղակի և ամենաշեղծաբանող տա-
տարածողները, և ինչո՞ւ զարմանալ ուրեմն, որ
ամեն անգամ, երբ մի որ և է գիւղում, կամ գա-
ւառական քաղաքում երևում է մի որ և է վա-
րակիչ հիւանդութիւն, շատ կարճ միջոցում այդ
հիւանդութիւնը տարածվում է շատ տեղեր և ա-
հապիւն զոհեր է տանում:

Բայց ի՞նչ անի մեր ժողովուրդը. նա այնպէս է
համոզված. տարիների և նոյն իսկ դարերի ըն-
թացքում նա այդպէս է արել, այդպէս է վարվել:
Ո՛վ նրան հասկացրեց թէ այդպէս չը պէտք է ա-
նել. ո՞վ նրան ասաց, որ այդպէս վարվել վնասա-
կար է. ո՞վ նրան մի անգամ նկատեց, որ վարա-
կիչ հիւանդութիւնների առաջն առնելու գլխաւոր
պայմաններից մէկն էլ այն է, որ հիւանդին պէտք
է դնել առ առ ձ ա ց ա ճ ձ դրութեան մէջ. հարց-
նում ենք, երբ այդ ժողովուրդին հաղորդեցին նը-
րան հասկանալի լեզուով բժշկական զանազան
տարրական տեղեկութիւններ, որպէս զի նա այդ
տեղեկութիւններից օգտվէր: Ի հարկէ, ոչ ոք: Ո՛վ
կարող է մասնաւոր անել նոյն իսկ մէկ երկու

ժ ո ղ ո վ ռ ա կ ա ն բ ժ շ կ ա կ ա ն դրքի վրա,
որը կարելի լինէր նոյն իսկ այդպիսի դէպքերում
ժողովուրդի մէջ տարածել, որպէս զի կարելի լինէր
գէթ այդ դրքերի միջոցով մի քանի տեղեկու-
թիւններ հաղորդել իր տեղի սովորութիւններին
գերի դարձած ժողովուրդին: Ի հարկէ, ոչ ոք չէ
կարող մասնաւոր անել այդպիսի ժողովրդական
բժշկական դրքերի վրա, որովհետեւ մեր բժշկե-
սերը, քաղաքային փափուկ կեանքին ընտելացած
և առաւօտից մինչև երեկոյ պապիկն են տնիւր
որոնող բժիշկները, այդ մասին ոչ մտածել են, և
ոչ էլ փորձել են այդ նպատակով մի որ և է ինչ
բան շինելու: Մասնաւոր-բժիշկների այդ խուսձը,
որի ուղղակի պարտաւորութիւնն է հոգալ այդ մա-
սին, օրիցօր մեծ քաղաքներում կենտրոնանալով,
ոչինչ անմիջական օգնութիւն չէ հասցնում գա-
ւառներին, ոչինչ անմիջական ներգործութիւն չէ
անում գաւառական կեանքի առողջապահութեան
վրա. բայց աւելի ցաւալին այն է, որ այդ մի և
նոյն մասնագէտ-բժիշկները չեն էլ մտածում դէթ
ժողովրդականացրած բժշկական բրօշխիւներով և
դրոյշներով մի փոքր թիվեանցներով ժողովուրդի
վիշտը այնպիսի ծանր բոլորներում, երբ վարա-
կիչ հիւանդութիւնները անարգել կերպով հարիւ-
րաւոր զոհեր են տանում խաւարի մէջ ընկած
ժողովուրդի միջից....

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 7 յունվարի

Կարդում ենք տեղական լրագրիներում, որ յո-
գուտ դէյրոնացի հրկիզանքները ամեն տեղից և
ամեն դասակարգերից, օրինակ վաճառականնե-
րից, ուսանողներից, ուսումնաբանների աշա-
կերաններից, մինչև անգամ զործարանների բան-
ւորներից հանգանակվում են թէ խոշոր և թէ
մանր գումարներ: Իսկ մինք՝ զործարաններու
միջից այս անգամ նոյնպէս անտարբեր պէտք է
վերաբերվեմք դէպի այսպիսի պարտականութիւ-
նը: Միթէ մենք նոյնպէս չենք կարող մեր մի
քանի կօպէկներով մասնակից լինել այս դէպքին:
Վերջապէս գոնէ օրինակ վերցնենք աղքատ ա-
շակերտներից ու բանւորներից: Մենք, որ կարո-
ղանում ենք չապլ ծախսեր անել, ցրիկ կամ դա-
նազան հասարակական տեղեր յաճախել, ուրեմն
և կարող ենք օգնութիւն հասցնել մեր կարողու-
թեան չափ մեր կարօտեալ եղբայրներին: Ի հար-

հապանք է սրանց յաղթանակը. թող տօնեն ու-
րեմն.... Մայրս տօնում է, որովհետեւ իր օրերում
ինձ մարդու է տալի, բաղդաւորացնում է ինձ,
ոտի է կանգնեցնում, ապաղաս ապաղանջանում
է, ճանապարհ է բաց անում քրոջ համար, խալ-
խի առ ու խօսից աղաւթում է: Այդ տօնախմ-
բութեան օրերում Սալեթօնի մի ձեռքը՝ եղում
պիտի լինի, միւս ձեռքը՝ մեղրում: Մոլա Սիմօ-
նը իր դէպի ինձ վեհաճանապահ վերաբերու-
թեամբ անցեալ կեանքի հին հին հաշիւներն է
տեսնում, իր անցեալ մեղքերը քաւում է, որ
միւս աշխարհում գոնէ սե երես չը մնայ Մաթոս
աղի առջև: Ելի էլ մի մնաց.... Այո, քրոջս համար
ճանապարհ է բացվում. տայ Աստուած, որ նա
ինձանից բաղդաւոր լինի, իր մուրազին հասնի:
Ելի ո՞վ մնաց: Այո, Ծողալթ սանամարը պիտի
տօնէ.... Որ նա այստեղ լինէր, ինքն պիտի ու-
րախանար իմ մարդու գնալուն. նա սակայն այն-
տեղ էլ, Դու, կը լսի այդ համբաւը և կը տօ-
նէ, որ իր հոգին զգեսնելի փայլ չէ լինում: Տօն
է, սիրելիս.... Ի՞նչու դու ուրախ չը պիտի լի-
նիս: Տօն է, վաղը ինձ պիտի նշան բերին: Վա-
ղը այս մատիս վրա մատանի պիտի լինի, ոչ
այն մատանին, որ իմ անուրով մօրդ վրա էլի
ուղարկել, այլ մի ուրիշ մատանի: Լսիք, քեզ
պատմեմ.... Անցեալ դէշեր «տալաքանց» տանն
էի: Իմ փեսացուիս, Պետր Վասիլի Նորատուն-
կովին, պատմեցի մեր սիրոյ պատմութիւնը:
Պատմեցի, որ մենք մէկու մէկու սիրում էինք,
բայց քո մայրը արաւ չարա՛ խանդաբեր մեր

կէ, կարգաւորվ ալս տողերը մենք՝ գործակատարներս, հարց կառավարները թէ արդեօք ձվ կամ Երբ են դիմել մեզ, որ մենք մերժած լինէինք, խնայելով մի քանի կօպէկները այսպիսի սուր գործի համար: Բայց մենք ունենք հասկացող ու հեղինակութիւն ունեցող գործակատարներ, որոնց ուղղակի պարտաւորութիւնն է այսպիսի դէպքում մեզ առաջնորդել, սակայն ափսոս, որ նրանք յանձն չեն առնում այդ տեսակ առաջնորդութիւն, երևի մանր գործակատարների շարքում իրանց չը գնելու պատճառով: Այդ թէ ոչ ինչ բանին վերադրենք այս ցաւալի երևոյթը: Բայց ինչ և իցէ կը յուսանք, որ մեր ներկայ հրաւրը ապարդիւն չի անցնի և մեր առաջնակարգ գործակատարները կը հոգան, իրանց միջոց մի քանի անձինք նշանակելով՝ այս գործը աշողնեցնելու համար:

Գործակատար

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Новое Обозрение» լրագիրը լսել է որ վարժուհիների փոխադարձ օգնութեան թիֆլիսի ընկերութիւնը, անցեալ տարվայ պէս կազմելու է և այս տարի իր անդամութիւնների համար մի շարք դաստիարակութիւններ կուկանան Գիւղատնտեսական ընկերութեան քննակարանում: Ի միջի այլոց մի հայուհի կին-բժիշկ Խաչատուրի կարգաւոր է մի շարք դաստիարակութիւններ ֆիզիոլոգիայի մասին:

Ստացանք ԲԱՅԱՆՈՒՄԻՅ Կ. Սարգիս Մակարեանցի ձեռքով Բաթումի մէջ յօդուտ գէթութեան ճիւղի հանգանակված 51 րուբլի Այդ փողի նուիրատուների մեծ մասը հայեր են, ի հարկէ, բայց չպտենէ, էլ նուիրատուների թիւում կան՝ Բաթումում ապրող ի տալ ցախի եր, յոյն եր, հրէ ան եր, և մի թուրք:

Նրանում հայերի և թուրքերի մէջ պատահած կռիւների մասին «Кавказ» պաշտօնական լրագիրն Նրանից գրում են հետեւալը. «Յունվարի 5-ին երկու թուրք վրէժխնդրութիւնից հրապարակի վրա սպանեցին երկու հայի: Այդ դէպքը դժբաղդ է հայերին, որոնք մեծ բազմութեամբ խմբվեցին հրապարակի վրա: Քաղաքի դահլիճն մասերում հայերի և թուրքերի մէջ տեղի ունեցած ընդհարումների ժամանակ վեց թուրք վիրաւորվեցին: Գործը ընդմիջվեց է:»

ԻԳՒԻԻԻՅ մեր թղթակիցը գրում է հետեւալը. երաշխաւոր չը լինելով լուրի ճշգրտութեան մասին՝ «Սարգաբաբալ դաւառի Արտաշատ գիւղում տեղի ունեցաւ մի եղեռնական դէպք: Հարսանիքի հանդիսին հրաւիրված էին զանազան դասակարգի մարդիկ, ճաշի ժամանակ տանտէրը կառավարիչ

բաղը: Գիտես, Պետր Վասիլիւիչի համար անհասկանալի է քո մօր արարքը, որպէս նաև անհասկանալի մնացիլ նրա համար և դու, Մանուէլ: «Այստեղ, ասեց նա, — երբևէ մի տարակուսանք է տեղի ունեցել, ինձ համար միանգամայն անհասկանալի է, որ եթէ այդ պարոնը (այսինքն դու, Մանուէլ) ձեզ իրաւ սիրելիս է եղել, ինչպէս կառողացել է նրա մայրը արդեւ դառնալ ձեր բաղըդին... Երևի նա (դու, Մանուէլ) գլխին գտակ չէ ունեցել, այլ չարաստ է՝, աւելացրեց նա, բաւական է նրա վրա խօսելը. նա (խօսքը միշտ ըստ վրա է Մանուէլ) երբեք արժանի չէ կարող լինել ձեր սիրոյն: Յանձնեցէք ինձ ձեր ձեռքը (սիր, լաւ լսիր Մանուէլ) և ես խոստանում եմ, որ երկար չի տևի, որ նա ձեր մաքից բոլորովին դուրս կը գալ, դուք ինքնեք կը տեսնէք և կը հաւատարմ նրա արժանաւորութեանը: — Դուք, շարունակում էր նա, դեռ ես ոչ չեմ սիրել, և ես յուսալից եմ միանգամայն, որ պիտի կարողանամ դրանք ամբողջովին ձեր սէրը: Իմ ամբողջ կենքը ձեզ պիտի նուիրեմ. մի մեթօք միայն ինձ ձեր ձեռքը: Ես այն օրը խօսք տուցի: Ներան, այսօր այդ իմ խօսքը հաստատեցի: Այնօր միջնորդութեամբ, վաղը նշան պիտի բերեն ինձ: Տօնէ, ուրիշն և դու, Մանուէլ, այսուհետեւ ազատ ես բոլորովին:»

Վաղը ինձ պիտի նշան բերեն... բայց, մտաբերելով այդ, իմ սիրտն ու հոգին չիթլիւում են. ես չեմ կարողանում ի մի ժողովել ցիրուցան եղած մտքերս. անցեալը ապագայի հետ կուտւում է,

է ընտրում մի չքաւոր, բայց համեստ մարդու, հրաւիրվածներից ամենահարուստը իրան անպատւած համարելով, սկսում է հայոյել, անվայել խօսքեր ասել նորընտիր կառավարչին, սա էլ իր կողմից պատասխանում է. հարուստ պարոնը, ատրճանակով գնտակահարում է նրան. սպանողի եղբայրը կուի մէջ է մտնում և թրով երկու կէս անում հարուստ մարդուն. վերջինիս բարեկամներն են վրա հասնում և ծանր վիրաւորում են նրան. սպանութիւնները դեռ էլի պէտք է շարունակվեն, եթէ մարդիկ կուղեներին չը բաժանէին:»

Պարսկաստանի Արդաբիլ քաղաքից մեզ գրում են. «1886 թվին, Վարդանանց տօնից մի ամիս առաջ, տեղիս երիտասարդները մասնակցութեամբ Արդաբիլի հայ դպրոցի՝ աշակերտների, Վարդանանց տօնի առիթով ներկայացրին «Շուշանիկ» ողբերգութիւնը, և ներկայացումից դոյաւած արդիւնքով թատրոնի համար հագուստներ գնվեցան: Անցաւ մի ամիսը տարի, և կրկին Վարդանանց տօնի առիթով ներկայացրին «Արշակ երկրորդ» ողբերգութիւնը, որից դոյաւած 30 թուանը ծախսեցին կրկին թատրոնի վրա, այն է բոս կանգնեցրին, և 15 ձեռք չորեր գնեցին, այնպէս որ 1886 թվին դնված 20 ձեռք չորերի հետ միասին պահվեցաւ ուսումնարանի մի պահարանում: Մի քանի ժամանակից յետոյ հաստատական փողով դնված թատրոնական այդ չորերը անհետացան և մինչև այժմ հաստատ յայտնի չէ թէ ձվ է այդ չորերի գողը:»

Պարսկաստանի Արդաբիլ քաղաքից մեր թղթակիցը մեզ գրում է, որ 1887 թվի դեկտեմբերի 23-ին, չորեքշաբթի երկրոյնան, Արդաբիլում այդ վեցան բաղմամբ խանութներ, և մի մարդ էլ կրակի ձարակ դարձաւ: Վնասը դեռ հաշված չէ: Այդ օրերում սկսեց բաւական մեծ ձիւն դալ:

Մայրաքաղաքի «Новости» լրագրի մէջ կարդում ենք. «Երեկ, դեկտեմբերի 31-ին, «Նոր տարին» կանգնելուց երկու ժամ առաջ մի օտարտօն անձնասպանութեան դէպք պատահեցաւ: Մի բանուրի հագուստով անծանօթ մարդ, ընկաւ ձիաքաշ երկաթուղու տակ անձնասպանութեան նպատակով, բայց մի քանի անձինք կարողացան արդիւլը դրա այդ մտադրութիւնը. հանցեցին նրան ձիաքաշ երկաթուղու տակից, և հարցնելով նրան անձնասպանութեան պատճառը, նա թղթ ձայնով պատասխանեց հետեւալը, «Կենքը անտանելի դարձաւ ինձ համար: Չը գիտեցիք մարդու համար աշխարհն ոչինչ վայելչութիւն չունի. ես ամեն օր հարբում եմ և իմ ամբողջ ունեցածս վատնեցի: Նոր տարին ինձ ոչինչ չի բերի: Ինչի համար ապրեմ թողէք...»

Թունաւորելով իմ խեղճիկ ներկան: Սիրտս լլկն է փտաբեկ տառապանքների նախազգացումներով: Կաթոլիկ անձկութիւնը և անորոշ ցանկութիւնները սարսուռ են բերում վրաս: Չեմ կարողանում որոշել ինչ է ուղում իմ սիրտը. անցեալի անպաճաճ օրերը, թէ ապագայի անյայտ պատրանքը...»

Սրանք ինձ վաղ թէ ուշ մարդու պիտի տան. մի և նոյնը չէ ում պիտի գնամ: Եթէ նա լաւ մարդ է, կը պատւեմ նրան, նրա բարեկամը կը լինեմ, կը սիրեմ նրան: Այնուհետեւ միայնակ չեմ լինի աշխարհի երեսին: Նա կը հասկանալ ինձ և ես վերջապէս կազատվեմ այն անտանելի դրութիւնից, ըստ որում ինձ չըբազապատողների մէջ պատահեց եմ ես միշտ կամ անհասկացողութեան, կամ սառնասրտութեան հետ... * *

Միւս օրը ինձ նշանեցին և մի ամիսից յետոյ կատարվեցաւ մեր պսակը: Այդ ժամանակամիջոցում իմ քաշածը անկարող եմ նկարագրել. այն պատճառով խոսեմ չիմ ինչ, այն աստիճան հասարակ էին միմեանց իմ մաքից, իմ դպացմունքները: Բայց, ընդհանրապէս խօսելով, արտադրանք արագեցում էր իմ տարուբերվող կենցաղի վրա: Մի միջանկեալ դէպք, որ տեղի ունեցաւ այդ միջոցում, աւելի սաստկացրեց իմ դառնութեան բաժակը, աւելի ծանրացրեց իմ խաչը:

Մէկ օր քոյրս, ես և նշանածս դուրս էինք դալիս տնից դրօսանքի դնալու: Գրանը պատահեցինք մի անծանօթ օֆիցերի, որը իմ մօրն էր:

Մեզ հաղորդում են, որ այս օրերս թիֆլիսում մի ընտանիքի բոլոր անդամները անպիտութեամբ թունաւորվեցան: Հրաւիրված բժիշկը կարողացաւ օգնութիւն հասցնել բոլորին, և ոչ չէր հետ ոչինչ: Դժբաղդութիւն չը պատահեց: Ենթադրում են, որ պատճառը բազարից առած միսն է եղել, և եղբայրը կուի մէջ է մտնում և թրով երկու կէս անում հարուստ մարդուն. վերջինիս բարեկամներն են վրա հասնում և ծանր վիրաւորում են նրան. սպանութիւնները դեռ էլի պէտք է շարունակվեն, եթէ մարդիկ կուղեներին չը բաժանէին:»

Յունվարի 10-ին կատարվեցաւ թիֆլիսի Արհեստավարաց դպրոցի տարեկան ակումբ, նոյն դպրոցի շինութեան մէջ, ներկայութեամբ ոչ բազմաթիւ հասարակութեան: Հանդէսը բացեց տեսուչ պ. Խարիով կարգաւորվ դպրոցի ուսումնական և անտեսական հաշիւը: Արհեստավարաց դպրոցը արդէն երրորդ անգամն է, որ բաց է թողնում ուսումնական աշակերտներ, որոնց թիւը այս տարի 13 է: Հասարակութեան ներկայութեամբ ուսումնական աշակերտներին տրվեցան վկայականներ, իսկ մի քանիսն են էլ՝ իրանց լաւ վարքի և առաջադիմութեան համար՝ պարգևներ ստացան: Հանդիսի վերջում դպրոցի տեսուչը դարձաւ դէպի ուսումնական աշակերտները շնորհաւորելով նրանց կենքի մէջ մտնելը, մի քանի յորդորներ կարգաց և յայտնեց, որ դպրոցը շատ ուրախ կը լինի եթէ իր սաները աշողնութիւն կուհնան կենքի մէջ: Հանդիսի վերջանալուց յետոյ ներկայ եղողները տեսան աշակերտների պատրաստած զանազան իրեղէնները, որոնք, ի ցոյց էին դրված դպրոցի դանդիներին մէկուս:

Կիրակի, ամսիս 10-ին, թիֆլիսի ժողովարանում կայացաւ Հայուհեաց բարեգործական ընկերութեան պարահանդէսը: Հասարակութիւնը բաւական կար, բայց ոչ այնքան, ինչքան անցեալ տարվայ պարահանդէսի ժամանակ: Այդ բանը կարելի է վերաբերել պարահանդէսի կառավարիչների անտարբերութեան, որոնք հարկաւոր չէին համարել լրագիրներում յայտարարել պարահանդէսի մասին: Պարահանդէսը անցաւ բաւական աշխույժ, պարում էին մինչև ժամը 1/2-ը: Կար և վիճակաւոր, որի տոնակները բոլորն էլ վաճառվեցան:

Լուսւմ ենք, որ տեղական հայ դերասանները միանալով, մտադրութիւն ունեն մինչև մեծ պատը մի շարք ներկայացումներ տալ ամառական կըլուրի (նախկին Կրուժոկի) դահլիճում: Առաջին ներկայացումը կը կայանայ առաջիկայ կիրակի, յունվարի 17-ին:

Շաբաթ օր, 9-ին յունվարի, գերմանացի պիտանտ Ալֆրէդ Բէյզմանուէր տունը թիֆլիսի քաղաքային թատրոնում իր 5-օրը կօնցէրաւ: Թատրոնական դահլիճը գրեթէ լի էր և հասարակութեան ոգևորութեան սահման չը կար: Պիտանտը

հարցնում էր ընտանի ուղադրութիւն չը դարձրի նրա վրա, և իմ ուղեկիցները հրաւիրեցին նրան ներս մտնել, որտեղ պիտի գտնէր մօրս իրիկնապահին, երբ մենք վերադարձանք, մօրս ես շատ արեւել և վրդուկած գտայ: Ինչ կողմից էլ ես նրան հարց ու փորձ չըբեցի, չը կարողացայ իմանալ նրա այդքան արդարութեամբ պատճառը. նա՛ կասե՛՛ չուրաճ լինէր: Հետեւալ օրերը նոյնպէս: Բայց, չը նայելով նրա այդ տեսակ դրութեանը, նա՛ կարելի է ասե՛՛ կրկնապատկեալ ջանքով էր առաջ տանում հարսանիքի պատրաստութիւնները: Կասե՛՛ տնեպային անհամբերութեամբ էր չէր մտնում և միշտ խոյս էր տալիս իմ հարցերին պատասխանելու. չէր կարողանում մինչև անգամ ուղղակի նայել աչքերիս: Թէ ես՝ այսպէս ասած՝ թմրութեան մէջ էի և զաղթութեամբ էի նայում իմ չորջու, բայց և այնպէս մայրս դարձրել էր իր վրա իմ ուղադրութիւնը. լուեկան ես գիտում էի նրա այդ արտասովոր արամատիւրութիւնը, որը ինձ ծանր խոլման մէջ էր դրել: Մերթ ընդ մերթ այնպիսի անձկութիւն կը նկատուէր պատակերի վրա, որ, ճշմարիտ, սիրտս կը սկսէր մարմաշէլ:

Մի քանի օր մնացած իմ պսակի դիւրեկան, նա ինձ ասաց.

— Գիտես, էն օրվայ ամիսները երեկ էլի եկել էր. էն, էն անուն կրթված ձեռ չէ քաշում մեզ դանիք... Մատանիք ա ուղարկել և թամբա՛ ա արել ամիսներին ասելու մեզ, որ ինքն էլ չուտով

ածեց մեծ ճաշակով Շուսանի «Etudes Symphoniques», բայց ամենից շատ աշողնութիւն ունեցան նրա ածած հետեւալ պիեսները. Լիտից փոխադրած Բօսնիի «La Carita», այնուհետեւ Բուրնշաէյի «Valse-Caprice» և Լիտի «Rhapsodie hongroise» և «Tarantella»: Պրօգրամայից դուրս Բէյզմանուէր ածեց Վէրէրի «Perpetuum mobile», Շօպէնի մի «Շօկոլադէ», Մէնդելսոնի մի շատ յայտնի փոքրիկ պիեսա և Շուբերտի «Աղբիւր» անունով մի պիեսա: Կօնցէրտի վերջը դարձեալ կրկնել տուցին արտիստին և նա ածեց մի քանի վարիացիներ Ստրաուսի վալսների եղանակների վրա: Մենք դարձեալ համոզվեցանք այդ կօնցէրտում որ Բէյզմանուէր միացնում է իր անելու մէջ զգացմունքի և ինքնուրոյն արտայայտութեան հետ մասների աներակալելի և կատարելութեանը հասցրած տէխնիկան: Ներտասարդ պիտանտին սպասում է անշուշտ մի աշխարհահռչակ ապագայ:

ԲԱՅԱՆՈՒՄԻՅ մեզ գրում են, որ յունվարի 7-ին այդտեղ հրդեհին զո՛ւ գնաց կերօսին 20.000 արկղով բռնված մի առաքատաւոր նաւ: Լըսվում է որ կերօսինը պատկանում էր վաճառական Ռիմսերին: Թղթակիցն ասում է որ եղանակը Բաթումում շատ վատ է և Սև ծովը սաստիկ ալեկոծված է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏՆՆԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սրանից մի քանի ժամանակ առաջ «Русский Инвалид» լրագրի հրատարակած յայտնի յօդուածը մինչև այժմ էլ զանազան տեսակ ըննադատութիւններ է յարուցանում եւրօպական մասնուի մէջ: Բերլինում հրատարակող «Melitair Wochenblatt» (Ձկնորական շաբաթաթիւր) լրագիրը, ինչպէս հեռագրում է մեզ Բերլինից, յունվարի 6-ից «Հիսիսային գործակալութիւնը», մասնադիտարար ըննադատում է յիշեալ յօդուածը: Գերմանական զինուորական լրագրի յօդուածը սկսվում է այն նկատողութեամբ թէ չը նայած, որ «Русский Инвалид» լրագրի հարդաւորները վճռական ընդդիմադրութեան հանդիպեցին գերմանական և աւստրո-ունգարական լրագիրների կողմից, բայց և այնպէս ռուսաց մամուլը պնդում է այդ լրագրի հարդաւորների ճշգրտութեան վրա: Դրանից յետոյ հաշուում է սահմանադրի զինուորական չըբաններում և սահմանադրի նահանգներում եղած զօրաբաժինների թիւը խաղաղութեան ժամանակի վերաբերութեամբ, և դուրս է բերվում, որ ռուսաց այդ զօրքերի թիւն է 315.000, իսկ զաշտային թիւանութիւնների թիւն է 689. աւստրիական զօրքերի թիւը՝ 38.000, իսկ զաշտային թիւանութիւնների թիւը՝ 170. գերմանական

պիտի գալ...

— Ինքն էլ պիտի... իմ Արարիչ Աստուած, ինքն էլ պիտի գալ... Գիտեմ ում վրա է խօսքը, հարցնել հարկաւոր չէ:

— Բայց դու ինչ պատասխանեցիր, ինչու այսքան օր ինձ ոչինչ չէիր ասում...

Աւանդ, այս հարցերիս պատասխանը առաջուց իմանալով, թաղել կեալ վրաս:

— Ես ասեցի, որ նա սրանից յետոյ իմ չէմքը չը ճանաչի, էլ ինչ պիտի ասէի...

— Որտեղ է այն օֆիցերը:

— Սատանէն ա իմանում նրա դուրսն ու արեւը, ես ինչ իմանամ. որ ջահադաւանք որ եկել էր, էլի ընտել գնացած կը լինի Ելի...

Բուռն առարկութիւններ տեղի ունեցան իմ և մօրս մէջ: Գուտաւատ և աղիողորմ բացականչութիւններ էին դուրս թուում իմ կուրծքից. դանդաղեցին էլի այն իմ ճակատագրի ձեռքից. կըշտամբանք էին, աղաչանք, սպառնալիք...

Բայց ինչ փոյթ, ամեն բան վերջացած էր. այդ իմ վերջին յայտն էր, որ առկայծվեցաւ ու մասնաւոր: Այսուհետեւ ամենուրեք մութը պատեղ էր. մութը գլխիս ու մտքերիս մէջ, մութը արտի մէջ, չըբում էի մութ աշխարհում: Այլ ես լոյսի և յոյսի նշույլ չը կար: Այս օրից սկսած, ինձ վիճակվեցան ապագայի վշտալից նախազգացումներ, որոնց տակ մնացի ընկճված երկար տարիներ:

(Կը շարունակվի)

գործերի թիւը՝ 98,200, իսկ դաշտային թիւը՝ 338: Միմեանց հանդէպ զննելով դերմանա-ուսումնական սահմանադրութիւնը պատերազմական պայմանները, ամենից առաջ՝ սահմանադրութիւնը կողմերի վերաբերութեամբ էս, որոշվում է հետեւեալ տարածութիւնը. Գերմանիայի համար՝ 119,456 քառակուսի կիլոմետր, իսկ Ռուսաստանի համար 119,311 քառակուսի կիլոմետր. բացի դրանից, խաղաղութեան ժամանակի ցուցակները և դորախմբի պաշտօնական թվերից դուրս է բերվում, թէ իսկապէս որքան զօրք է կենտրոնացած յիշեալ տարածութեան վրա: Այդ հաշիւներին նայելով, գերմանական աւելի լայնատարած սահմանի վրա գտնվում է 81,714 զինուոր, 14,520 ձի, և 238 թնդանօթ. իսկ Ռուսաց սահմանի վրա՝ 123,875 զինուոր, 24,198 ձի և 274 թնդանօթ: Վարչական բերդապահ խումբը բաղկացած է 20,000 մարդուց, 3,600 ձիուց և 51 դաշտային թնդանօթից, և այդ բերդապահ զուգորդ հանդիպակադրվում է Արեւելքից, որտեղ գտնվում է 7,600 մարդ, 1,400 ձի և 50 դաշտային թնդանօթ, և Բրիտանիան, որի բերդապահ զուգորդ բաղկացած է 5,000 մարդուց, 110 ձիուց և 32 դաշտային թնդանօթից: Իսկ «Русский Инвалид» լրագրի այն նկատողութիւնը, թէ 1878 թվականից սկսած արեւելեան Գերմանիայում չիմված է 4,850 կիլոմետր երկաթուղու նոր գիծ, Բերլինի վերաբերական լրագիրը պատասխանում է, որ յիշեալ թվականից արեւելեան և արեւմտեան Պրուսիայում, Պոզնանում և Սիլեզիայում, Օդերի աջակողմում, կառուցված է ընդամենը 1865 կիլոմետր երկաթուղու գիծ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԿՍ ԼԱՅԱՍՏԱՆԻՑ

Դայեմերի 28-ին: Վեցամեակ բացակայութիւնից յետոյ վերադարձաւ Տրապիզոն թիմի առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Սրբաճառեան, որին դերմադրելու համար շատ հայեր ընդ առաջ էին դուրս եկել:

Կ. Պօլսի Բերա թաղի իւզական Արտեմաստանցի վարժարանի տեսչին տրվին Գայանէ Մատակեան, որը մի քանի ժամանակ առաջ հրաժարվել էր այդ պաշտօնից, այժմ, ինչպէս հաղորդում են Պօլսի հայոց լրագիրները, յետ է առել իր հրաժարականը և նորից ստանձնել է տեսչական պաշտօնը:

Վանի առաջնորդական փոխանորդ Ալեքսանդր եպիսկոպոսը շարունակում է պնդել իր հրաժարականի վրա. Պօլսի կրօնական ժողովը դեռ ևս շարունակում է համադել սրբազանին որ մնայ իր պաշտօնի մէջ:

Աճընից պաշտօնապէս հաղորդում են Պօլսի կրօնական ժողովին, որ երաշտութեան և դրանից առաջացած աղքատութեան չնայել կրօնախոխութիւնը ստատկանում է այդ տեղի հայ ազգաբնակիչներին մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինից հեռագրում են հետեւեալ լուրը. «Բացված է մի դաւադրութիւն ընդդէմ գերմանական թագաւթաւանդի»:

—«Nord» լրագիրը յայտնում է, որ պրինց Ֆերդինանդի Բալթիկայից հեռանալու հարցի մէջ պետութիւնները թիւրքային են՝ թողնում միջամտելու իրաւունքը:

—Չինաստանի կանտոն քաղաքից փախչում ստացված տեղեկութիւններին նայելով, սեպտեմբեր ամսին, երբ Գերլին գետի ջուրը դուրս եկաւ իր ափերից, խեղդամահ եղան մի քանի միլիոն (?) մարդիկ:

—Վերջին օրերում ստացված տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ գերմանական լրագիրներից շատերը մեծ գովառանդով են խօսում Ֆինանսների միջնորդ Վիլհելմի Գրախի և Ռուսաստանի 1888 թվ. պետական ելեմտի նախահաշիւ մասին: Գովառանդով են խօսում նոյն իսկ այն լրագիրները, որոնք մի կարծ ժամանակ արանից առաջ անդադար յարձակվում էին Ռուսաց ֆինանսական միջնորդութեան գործունէութեան վրա: Պետերբուրգի մի քանի լրագիրներ խօսելով այդ հարցի մասին, նկատում են, որ գերմանական լրագիրների ուրախութեան պատճառը Ռուսաստանի պետական ֆինանսների ելեմտի նախահաշիւը է, այլ միայն այն երեւոյթը, որ 1888 թվ. նախահաշիւ մէջ ղեկնորդական վարչութեան ծախքը բացարձակ է:

—Սօֆիայից հեռագրում են գերմանական լրագիրներին, որ իբրեւ թէ թիւրքազգացական սահմանադրութիւն վրա գտել են մի քանի յայտնի անձանց գիտնելը, ի միջի այլոց կապիտան Նաբոկովի գիտնելը:

—Բէլգրադից գրում են, որ կառավարութեան ընդդիմադրական կուսակցութեան յարաբերութիւնները օրիցօր աւելի են լարվում:

—«Fremdenblatt» լրագիրը տեղեկութիւն է ստացել Բալթիկայից, որ Բուրգասում և Շումլա-յում դաւադրութեան նշաններ են բացված:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Դորբերում ֆրանսիական մի թատրոնի ղեկավարը՝ տեսնելով որ տեղական մի լրագրի բնօրինակները անպատ րեցնելովաներ է գրում իր ներկայացումների համար, վճռեց չը թողնել, որ այդ բնօրինակները թատրոն մտնի, ուստի գրութիւնը չը դարձնելով նոյն իսկ այն բանի վրա, որ նա տունակ ունի Բեյքոնդեմը գանգաւորաց դատարանին դիմելու համար, որ կապակցութեան դէմ, յայտնելով որ ինքը նրա պատճառով մեծ վնասներ է կրում: Գատարանը ոչ թէ միայն վճռեց, որ դիմելու համար քանի բեյքոնդեմը վնասները, այլ և որոշեց, որ դիմելու իրաւունք չունի ինքնակամ կերպով արդեւելու այս կամ այն մարդուն իր թատրոնը մտնելուն:

Իտալական «Fanfulla della Domenica» ամսագիրը իր վերջին տեսարանի մէջ տալի է չէրնոգորեան գրականութեան մի հետաքրքիր տեսութիւն: Ամսագրի կարծիքով, Չէրնոգորիայի ամենամեծ բանաստեղծ պէտք է համարել 1851 թվ. վախճանիւմ Պետրոս II իշխանին, որը վերջին ներկայացուցին էր այն հոգեւորական իշխանից իրից, որոնք 100 տարիների ընթացքում սրով և խաղով կառավարում էին չէրնոգորցիներին: Այդ մի և նոյն իշխանը բացի առաջին ժողովրդական դարձրը Յէտինիում և նոյնպէս առաջին անգամ մտադրել իր երկրում Գոտենբերգի գիւտը—տպագրութիւնը: Վերադառնալ իշխանից չէր զրկին է պատկանում բանաստեղծական գեղեցկութիւններով առատ «Gorski Vjena» (Լեռնային պոստ) վերնագրով պոէման որը պարունակում է Չէրնոգորիայի պատմութեան մէջ պատահած նշանաւոր անցքերի մի պատկեր, որը կարելի էր չէրնոգորցիների Բարդուղիմէոսեան դիշեր անուանել: Այդ անցքը հետեւեալն էր. XVII-դ դարում բազմաթիւ չէրնոգորցիներ մահմետականութիւն ընդունեցին, յարաբերութիւններ կապեցին թիւրքաց կառավարութեան հետ և այդպիսով, վտանգաւոր դարձան ազատասէր Սկ-Լեռան անկախութեան համար: Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, ժողովուրդը միաձայն վճռեց սրի անցնել բոլոր հաւատարացիներին առանց բացառութեան, և այդ սարսափելի վիճակը ճշդութեամբ կատարվեցաւ մի և նոյն գիշերը ամբողջ երկրում: Այդ լարնայից բաղկացած տեղի ունեցաւ 1802 թվ. և ահա այդ բանն է նրա կազմում վերոյիշեալ պոէմայի համար: Չէրնոգորիական այդ «Նշխանի» մէջ հրաշալի կերպով արտաբայվում է չէրնոգորական փոքրիկ ժողովրդի հերոսական կռիւը, որը, Բալկանեան թերակղզու սլավոն ժողովուրդների թիւրքաց հրոսակներից ընկճվելու ժամանակ, մեծ ջաջութեամբ պաշտպանեց իր անկախութիւնը:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՉԱՐՁՈՒ, 8 յունվարի: Ամու-Գարիայի վրա շինված երկաթի կամուրջով, որը հենց նոր աւարտվեցաւ, երէկ անցաւ առաջին դնացը, գինեւալ Անենկովի, Չարձուի բէդի և շատ հրաւիրականներ հետ կամուրջի երկարութիւնը 972 սաժէն է, որանքը 809 սաժէնը գալիս է գետի գլխաւոր դաշտի վրա:

ՄԵՐՎ, 8 յունվարի: Մի տեսակ լուրերին նախովի խորհուրդներ սպանված է Հնդկաստանի անդլիական իշխանութեան կարգադրութեամբ, միւս տեսակ՝ աւելի նոր լուրերին նայելով, Էյուր-խանը գտնվում է Մեշիէնում: Ռուս-ազգանական նոր սահմանադրութիւնը որոշող աշխատանքները առաջ էն գնում շատ արդի կերպով. գեղեցիկ 17-ին, Ռուս-անդլիական յանձնարարութիւնը, որը բաղկացած է կապիտան Կոմարովից, փոխ-գնդապետ Իստից և միտեբ Պիկովից, առաջ գնաց Մերուշկինց դէպի Խոջա-Սալէ՝ Ամու-Գարիայով: Նոր պայմանագրի համաձայն, 2,400 քառ. միւրստ շատ լաւ արտատեղի աւազանական հողերից միացվեցաւ մեր սահմանի հետ: Սահմանադրութիւնը որոշող աշխատանքները փետրվար ամսից շուտ չեն վերջանալ:

ԿԻՆՎ, 8 յունվարի: Այսօր ս. Վլադիմիրի համալսարանում կայացաւ տարեկան ակադեմիկոսական կարգով:

ՎԻԵՆՆԱ, 8 յունվարի: «Correspondenze» լրագրին գրում են Սօֆիայից, որ այնտեղ կասկածում են Նոբելովի սպանման մասին: Առհասարակ Հալպասի գործակալութիւնը հաղորդում է անձինք տեղեկութիւններ Բուրգասի միջնադէպքի մասին՝ բազմաթիւ կառավարիչներին նպաստաւոր լինելու համար. նորա հրատարակած նամակները, որոնք գտնվել են սպանված չէրնոգորցիներին մօտ, կեղծ կամ աղաւաղված են: Ռուսաց դեսպան Խիտրովի նամակը՝ միմիայն մի յանձնարարական է, որը առաւ է մի ոմն Նաուովի, որը կամենում է եղել ուղեւորել Ռուսաստան:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 9 յունվարի: «Гражданинъ» լրագիրը հաղորդում է, որ փոստային և հեռագրական գլխաւոր վարչութեան մէջ վերջնականապէս վճռված է դէմադրութիւն փոստի կեդարանափոխութեան հարցը: Երէկ Պետերբուրգի դատաստանական պալատի քրէական դեպարտամենտում քննվեցաւ «Новое Время» լրագրի խմբագիր Ֆեոդորովի դործը, որը մեղադրվում է չարախօսութեան մէջ: Գործը վերաբերում է գերմանական ղեկնորդական լրագրի ներկայացուցիչ գնդապետ Վիլիսովի, և քննվում էր դռնփակ: Ֆեոդորով դատաւարված է 150 լուպլի տուգանքի և վեց շաբաթվա կալանաւորութեան: ԼՕՆՊՈՆ, 9 յունվարի: «Times» հաղորդում է, որ Սօֆիայի աւստրիական զիպլոմատիական գործակալութեան բոլոր անդամները յանկարծակի յետ կանչվեցան Սօֆիայից, և հինգշաբթի օր արդէն ուղեւորվեցան դէպի Վիեննա:

ՏՈՒԼՈՒ, 9 յունվարի: Այստեղ զորանոցի մէջ նկատվում է եռանդուն զործունէութիւն. ծովային նաւերը պատրաստվում են առաջ դնալու. պատերազմական նաւերը ղեկավարվում են:

ՐԵՎԷԼ, 9 յունվարի: Նաւահանգիստը փակված է սառուցով. բեռնաւորված նաւերը կարողացան կտրել սառույցը և մտնել ծովը. մնացած նաւերը վախճանում են մի և նոյնը անել: Նաւահանգիստին նոր մօտեցող երկու նաւ յետ դարձան դէպի ծովը: Բալտիկան նաւահանգիստը աղաւթ է սառուցից: Կ. ՊՈԼԻՍ, 9 յունվարի: Թիւրքաց պատերազմական միջնորդութիւնը կարգադրեց՝ ընդարձակել խորհուրդի նորերում աւարտած ամբողջութիւնները. լուրերին նայելով, ենթադրութիւն կայ զօրացնել խորհուրդի բերդապահ զօրքի թիւը:

ՓԱՐԻՉ, 9 յունվարի: Ֆրանսիական հիւպատոսի մօտ կատարված ապօրինի հետախուզութիւնների առիթով առաջ եկած միջնադէպքը կարելի է վերջացած համարել, որովհետեւ խտանական դիպլոմատիկ հաղորդեց արտաքին գործերի միջնորդին, որ չուսերտ թաղաւորի կառավարութիւնը համաձայն է տալ Ֆրանսիային՝ նրա պահանջած բաւարարութիւնը:

ՎԻԵՆՆԱ, 9 յունվարի: «Times» լրագրի հաղորդած լուրը, թէ Սօֆիայից յետ են կանչված աւստրիական զիպլոմատիական գործակալութեան բոլոր անդամները, ճիշդ չէ: Սօֆիայից դուրս է գնացել միմիայն աւստրիական գլխաւոր հիւպատոսը, որի հրաժարականը դեռ ևս անցեալ տարվայ հոկտեմբերին ընդունված էր:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 10 յունվարի: Ի նկատի ունենալով, որ ծխախոտային հարցի առիթով հաւաքված նիւթերի մակուլութիւնը բաւական ժամանակ է պահանջում, ֆինանսների միջնորդութիւնը, դանազան տարածաշրջանները վերացնելու համար յայտարարում է, թէ ենթադրութիւն կայ 1888 և 1889 թվականներին պահպանել ծխախոտի հարկահանութեան այժմեան կարգը՝ բանդերային տուրքի միջոցով՝ ծխախոտի մասնաւոր պատրաստութեան դէպքում: «СВѢТЪ» լրագիրը հաղորդում է, որ Բուրգասի միջնադէպքը հետեւեալ կերպարանքը ունի. ապստամբները՝ Բալթիկա մտնելով՝ երեք մասի բաժանվեցան. մօտ 35 մարդ, Նաբոկովի առաջնորդութեամբ քաղաքի թիւրքեր և անձնատուր եղան թիւրքաց զօրքեր: 25 մարդ՝ Գրաթէնի առաջնորդութեամբ նոյնպէս հանդիպեցին թիւրք զօրքերին և անձնատուր եղան, երկու խմբերն էլ այժմ Ալբերտա գոյութեամբ բանտարկված են. երրորդ խումբը՝ որը բաղկացած է մօտ 100 մարդուց, Բոյանովի առաջնորդութեամբ մտաւ Բալթիկա, այնտեղ, դրանց առաջ ուղարկված բալթիկական զօրքերից մօտ 100 մարդ անցան Բոյանովի կողմը, այնուհետք դա այժմ համեմատաբար մեծ ուժ ունի և յոյս ունի աջողութիւն գտնելու:

ԽԱՐՎՈՎ, 10 յունվարի: Տնիւնօրդիական ինտորիտետում դասախօսութիւնները սկսվեցան:

ԲԻԼԻՍՍԷԼ, 10 յունվարի: «Nord» լրագիրը մատնանի է անում, որ Վիեննայի մամուլը անտեղի կերպով է պարզաբանում Մոսկվայի գինեւալ-նախագահական տուած Բարձրագոյն հրովարտակը. Վիեննայի լրագիրները հաստատում են, որ իբրեւ թէ Ռուսաստանը կամենում է միայն աւելի ժամանակ ունենալ զինաւորվելու համար. մինչդեռ Ռուսաց կառավարութեան յայտնած մտքերը մինչև անգամ ամենափոքր կասկած անգամ չեն կարող առաջ բերել, որ Ռուսաստանը ձգտում է խաղաղութիւնը պահպանել Ռուսաց լրագրութիւնը ևս կասկած է արտայայտում դէպի Աւստրիայի մտադրութիւնները: Յանկալի է, որ այդ անհիմն լինի, ինչպէս որ անհիմն է Աւստրիայի կասկածը դէպի Ռուսաստանի մտադրութիւնները: Յամենայն դէպս, Աւստրիան պէտք է ապացուցանի, որ նա վճռել է բազմաթիւ հարցը լուծելու գործում միայն այն ճանապարհով գնալ, որով ի նկատի պիտի առնվին Ռուսաստանի օրինական պահանջները:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 11 յունվարի: Новое Время հաղորդում է, որ լուցիկի վրա հարկը հաստատված է յունվարի 4-ին: Ծառաթի օր ֆինանսների միջնորդութեան մէջ խորհուրդ կայացաւ այդ հարկը ղնելու մասին: Լրագիրների տեղեկութիւնների համեմատ՝ Արխանգելսկ, Վոլոգդի, Վիատկի, Նովոգորոդ, Սիմեցկի, Պերմի նահանգներում, և նոյնպէս Վոլոգդի ձախ կողմում գտնվող նահանգների մասերում, այն և Կոստրոմայի, Նիժնեգորոդի և Կալուգայի, նոյնպէս և Արքիպոլայանան երկրի նահանգներում, բացի Ստաւրոպոլի նահանգից, անտառային օրէնքը կը գործադրվի միայն այն անտառների վերաբերութեամբ, որոնք անտառային վարչութեան յայտարարութեամբ անհրաժեշտ են համարվում գետերի ակունքները պահպանելու համար, և պետական զիւղացիներին տրված անտառային մասերի վերաբերութեամբ: «Новості» լրագիրը րկել է, որ արդարադատութեան միջնորդութիւնը մշակել և հաստատութեան է ներկայացրել Բալտեան նահանգներում մոցնվելի դատաստանական մասի վերանորոգութեան ծրագիրը: «Гражданинъ» հաղորդում է, որ պարսից շահը առաջիկայ դառնալը կայացել է Պետերբուրգ և Եկատերինբուրգ: Երէկ երկու հիւանդութիւնից յետոյ վախճանվեցաւ Եկատերինբուրգի եպիսկոպոս Սիմեոնի: Վերոյիշեալ վրա գինեւր ընկան 37—38 հոգ, այդու լրա. մի շաբաթ առաջ կէրօսին գինը 65 հոգեկ էր:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՈՍԱ

Յունվարի 8-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արծեւ	115 1/4	բուր
Համբուրգի վրա 100 մարկ	56	բ.
Փարիզի վրա 100 ֆրանկ	45 3/8	
Ռուկի	9	24 կ.
Ապրապին կուպոններ	184	25
Արծաթ	1	38
Բորսային դիվիդանդներ	6 1/4	71 1/2
Պետական քանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99	75
— — — — —	2-րդ	98
— — — — —	3-րդ	98
— — — — —	4-րդ	98
— — — — —	5-րդ	98
— — — — —	6-րդ	98
Նոր 4% փոխառութիւն	82	25
Արեւելեան 5% փոխառութիւն. 1-ին շրջ.	98	37
— — — — —	2-րդ	97
— — — — —	3-րդ	97
Նիւրնբեր 5% առաջին փոխառութիւն.	266	75
— — — — —	250	75
5 1/2% քէնտա	103	—
Ռսկեայ քէնտա	194	50
Եթեմբուրգ կոնսոլիդաց փոխառութիւն.	164	—
Նոր երկաթուղային քէնտա	98	25
5% գրաւական թղթեր կալուած.	—	—
— — — — —	163	50
— — — — —	97	75
5 1/2% գրաւական թղթեր Խերսոնի կալուած բանկի	99	75
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	102	—
— — — — —	101	50
— — — — —	101	75
— — — — —	102	25
— — — — —	102	50
— — — — —	101	25
— — — — —	101	50
— — — — —	101	—
— — — — —	27 և 43 տ.	98
— — — — —	18 և 43 տ.	98

Վճարակ-կանկի բանկի ակցիաները 714 > —
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 265 > 75
Իրիմուկ-Վոլոգդի ընկ. 95 > —
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվ. դաշիններ. 95 > —
Մոսկվայի քաղաք. օրվ. դաշիններ. 94 > 50
Օդեսայի 94 > 37
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ. — > —
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը բաւական ամուր է:

Խաղաղիւր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԻՆԻՆԻ

